## 117. ԳԻԼՈՍՆ ՈՒ ԵՎԳԻՆՈՍԸ

Էրկու հնգյեր են ըլըմ։ Ըհանք էնքան սիրով են ըլըմ, վըենց մըեր հարազատ ախպըերաքնըր։ Ըհանք միշտ իրար հետ են ըլըմ։ Ճաշըրմ են իրար հետ, քնըմ են իրար հետ, ման են կյալի իրար հետ։ Ուզըմ չեն մին-մնից մի սհաթ ռըկվեն։

Օրերի մի օր մի հնգյերը կնդյանը ասըմ ա. «Ա՛ կնիկ, մի արի իմ հնգյերին փորցենք, աբենամ տա՞ ղորթ ինձ էտքան հարգըմ ա, թե՞ կեղծ ա»։

Մի պուլիկ վըեսկի ա վըեր ունըմ, մի քիչ չիր ածըմ կլխին, պիրըմ ա հնգյերի տուն։ Ասըմ ա. «Ախպըե՛ր, թող էս չիրը ծըեր տանը մնա, մչև մըեր կյալը, ես ու իմ կնիկը քյնըմ ենք իրան հերանց տուն ղոնաղ»։ Ասըմ ա. «Շատ լա՛վ, ախպեր ջա՛ն, տի րաի, թող կենա»։

Ըհանք պուլիկը տնըմ են տհանց տանը ու կյալի։ Մի օր էս մարթը կնդյանը ասըմ ա. «Ա՛ կնիկ, էն ծիրանի չըրեը մի քիչ դիփի ուտենք, մչեր բաղարիցը կառնեմ, կպիրեմ, կլցնենք կլխին»։ Էս կնիկը մխեյի չիր ա վըերունըմ, ածըմ պղինձը, տենըմ ա վըեսկին տակին, ասըմ ա. «Ա՛ մարթ, պուլիկը լիքը վըեսկի ա, մենակ կլխին մի քիչ չիր ա ածած ըլեն»։ Ասըմ ա. «Ա՛ կնիկ, օրմու պոռն չի ասեն, էտ հու մըեր բախտիցն ա վըեսկի տառել»։

Ըհանք ծըեռաց վըեսկին թաքըրմ են, չիր առնըմ, լցնըմ պուլիկը ու անըմ տըեղը։ Մի քանի վախտից եդը, էն մարթը կյալիս ա, ասըմ ա. «Եկել եմ պուլիկս տանեմ»։

Ջիրը խառնըմ ա, տըենա՝ վըեսկի չիկա, տակիցը հետ չիր ա. ասըմ ա. «Ախպըե՛ր, էս ի՞նչ պա̈ն ա, ես քեզ վըեսկի եմ տվել. հմի տու ինձ չիր ես տալի»։

Ասըմ ա. «Ես վըեսկի չեմ տըեսել, տու տհե չրո̈վ պիրել ես, տհե չրո̈վ էլ տանըմ ես»։ Էս մարթը շատ ա վիճըմ տրա̈ հետ, պա̈ն չի տո̈ւս կյալի, քյնըմ ա դատարան, բողոքըմ ա։ Դատարանը կարըմ չի էտ գործը պարզի։ Ղրգյմ են Թաքավըրերի կուշտը։

Էտ Թաքավըրերի մինիստրը մի տղա ուներ անըմը Ծվգինոս։ Սրա̈ մըերը մեռած ա ըլըմ, խորթ մըեր ա ունենըմ։ Մի օր սա̈ հոր ծըեռին ճո̈ւր ածիլիս, բիրդա̈ն ծծաղըմ ա։ Հերը ասըմ ա,— «Էտ խի՞ ծըծաղեցիր»։ Ասըմ ա. «Հենց էնպես»։ Ասըմ ա. «Էլ հա»։ Ասըմ ա. «Էն ծլվլող ղուշը ասըմ ա՝ կըկյա̈ մի ժա̈մանակ, վըեր տա̈ էլ քու ծըեռին ճո̈ւր կածիս»։

Հերը ջղայնանըմ ա, թուրը հանըմ ա, ուզըմ ա սպանի։ Խորթ մըերը հիլ չի անըմ, ասըմ ա. «Օրը ճա̈շին ի՞նչ ես անըմ, տար պադվալը քցի, քշերը կսպանես»։ Էս մարթը տղին տանըմ ա, քցըմ պադվալը։ Քշերը էտ կնիկը քյնըմ ա, օքմենի պիրըմ, պատը ծակիլ տալի, էտ տղին ասըմ ա. «Դե, տո̈ւս արի, քյնա̈»։

Էս տղեն քյնըմ ա, մի բա̈զրգյա̈նի զաքի ծառայըմ ա։ Թաքավըրերը, վըեր մա̈նըմ ա, սա̈ իրան մինուճար տղին խուրկ ա տվել. տրա̈ն մինիստրութենից զըրկըմ ա։

Սա̈ իրան կնգյա̈ հետ քյնըմ ա մի ուրիշ կյեղըմ աշխատըմ, ապրըմ։ Թաքավըրերը կանչըմ ա բոլոր մինիստրներին, ժողով ա անըմ, թե ո՞ւմ տըննենք մինիստր։ Տհա̈նք ասըմ են. «Մենակ էն բա̈զրգյա̈նն ա, վըեր արժանի ա մինիստրի պաշտոնի»։ Էտ բա̈զրգյանին մինիստր են տնըմ։ Սա̈ տեղափոխվըմ ա ըտի։ Ծվգինոսին ուսումի ա տալի։ Մեծ ուսումնական ա տա̈ռնըմ։

Մի էրկու օր անց ա կենըմ։ Թաքավըրերը էն վըեսկու գործը պիրըմ ա, նիստի տնըմ, քննըմ։ Հա̈մա̈ն էտ վախտը իրեք եղունիկ կյա̈լիս են, ակոշկի ղաքին կաղնըմ ու սկսըմ թըխկթխկըցնիլ։ Ինչքան քիշ են անըմ՝ քյնըմ չեն։ Թաքավըրերը էտ մինիստրներին ասըմ ա. «Էս եղունիկնին ի՞նչ են ուզըմ, ո՞վ կասի»։ Մինն էլ ա պա̈ն չի ասըմ։ Ասըմ ա. «Կամ կասեք, կամ ծըեղ կլխատըիլ դեմ տալը»։

Էս բա̈զրգյան մինիստրը տխուր կյա̈լիս ա տուն։ Ծվդինոսը կյա̈լիս ա տըենըմ հերը տխուր նստած ա, ասըմ ա. «Հայրի՛կ, էտ ի՞նչ ա պատահել, խի՞ ես տխուր»։

Ասըմ ա. «Ա՛, բալա, սհե՛, սհե՛ պա̈ն, Թաքավըրերը մըկ էքուց

ժամանակ ա տվել. եթե քթնենք վրեն, սրեզ կխատիլ դի, ես էլ կարող եմ»։

Ասում ա. «Հայրիկ ջան, մտածիլ մի, եթե կանչի, քեզ հրցնի. տու բեր տակին ծծացի, ասա՝ էտ իմ տղեն էլ կասի։ Ինձ էլ հետդ տար, ես կասեմ։

Էրկու սա տղացեղին վրեր ա ունըմ. քյնըմ։ Թաքավըրըր էն վրեսկը ...երին էլ ա կանչըմ, մինիստրին էլ։ Էլ դատր սկսըմ են, թե չէ, եղունիկնին էլ են կյալի ըտի. Թխկթխկըցնըմ։ Թաքավըրըր կանչըմ ա էտ մինիստրին ասըմ ա. «Ասա՛, տրենամ, էտ ի՞նչ են ուզըմ։

Սա ծծացըմ ա, ասըմ ա. «էտ ի՞նչ ա վըեր, իմ տղեն էլ կասի,— էս տղին ասըմ ա,— տղա՛ ջան, ես մի քիչ վատ եմ զգըմ ինձ, մի տու իմ տրեղը խաքավըրերին պատասխանի»։ Թաքավըրըր ասըմ ա. «Տղա՛, ի՞նչ են ուզըմ էտ ղչերը»։

Ասըմ ա. «Թաքավըրըր ապրած կենա, էն մինր մարին ա, մինը վրեսցակը, մինն էլ ճուտը։ Մի օր մարին ծվի վրա թուխսր նստած ա ըլըմ, բիրդա՛ն կարկուտը նի ա ունըմ, մարին ծվի վրիցը թռչըմ ա, փախչըմ ա, էլ կյալիս չի։ Մրչեվր վրեսցակը վրեն նստըմ ա, ծվանը կոտրատվըմ են, մինն ա մնըմ։ Էտ մի ծվի վրա վրեսցակը նստըմ ա, ճուտ հանըմ, մեծցնըմ, շինըմ էտ տեսակ եղունիկ։ Հմի մարին եկել ա, ասըմ ա. «Իմն ա, տանըմ եմ»։ Վրեսցակն էլ տալիս չի։ Սկսել են վիճիլ՝ էկել են քու կուշտը, վրեր դատր կտրես, տհա՛նց դատի հետ էլ իրանց դատր անես»։

Թաքավըրըր մնըմ ա ըրմացած, ասըմ ա. «Տղա՛, վըեր տու տըհե խելքով ես. տու էլ դատը կտրի։ Ճուտր վրերի՞ն տանք»։

Ասըմ ա. «Իհարկե, վրեսցակին, թաքավըրըր ջան, նրա՛ն մի էրկու խան կարեկ տու, իրան մի ծվի հախը, ճուտն էլ տու վրեսցակին. վրեր իրան կլխիցը ծրեռն ա վրեկալել, կարկուտի տակին նստել ա, ճուտ հանել, մեծցրել, սոված ծարավ օրեր անցկցրել»։

Թաքավըրըր ասըմ ա. «Տղա՛ ջան, մի դատ էլ կա էն էլ կտրի»։ Ասըմ ա. «Ի՞նչ դատ ա, թաքավըրըր ապրած կենա»։ Ասըմ ա. «Սհե՛, սհե՛ դատն ա»։

Կանչըմ ա էն վրեսկին վրերունողին։ Ասըմ ա. «Ես տեղեկութին չի ունեմ»։ Ասըմ ա. «Բա վրեր ես կյա՛մ քթնե՞մ, էսինչ տրեղը սպահած ա»։

Տղեն վրեր տրեղը դո՛ւղ ասըմ ա, էտ մարթը մնըմ ա ըրմացած. ասըմ ա. «Չէ՛, ախպեր, ես կպիրեմ»։ Քյնըմ ա պիրըմ, տալիս տիրոնչը։ Թաքավըրըր, վրեր տենըմ ա սա տըհենց խե-

լոք ա, վաճառականին ասըմ ա. «Թող աղետ պալատըմը իմ կողքին մնա, բոլոր դատերն էլ նա̈ կտրի։ Իմ մինուճար ախչիկն էլ կտամ իրան, ես էլ էտա պռավել եմ, ինքը իմ տեղը թաքավըրը կտա̈ռնա̈»։

Էտ ա, էտ տղին պահըմ ա պալատըմը։ Ինչքան դատ ա ըլըմ, տա̈ ա կտրըմ։ Խա̈բա̈րը հասնըմ ա սրա հորն ու մորը։ Սհանք մանըմ են, վըեր պալատըմը մի ջա̈հիլ տղա կա, ինչքան դատ կա նա̈ ա կտրըմ, նրա̈ նման ա̈րթա̈ր, դո̈ւզ դատ կտրող չիկա ըշխարիս իրեսին։ Սհա̈նք էրկուսով վըեր են կենըմ կյալիս են տրա̈ կուշտը, վըեր իրանց բողոքն էլ լսի, մի գործ տա ապրեն։

Տղեն փարչը ծըեռին բալկոնն ա տո̈ւս կյա̈լի, վըեր ծըեռները լվա̈նա̈, էտ հադաղին հերնըմըերը կյա̈լիս են։ Հերը փարչը վեր ա ունըմ, տըղըմ ա տղի ծեռին ճո̈ւր ածի։ Տղեն մըտիկ ա անըմ թըչէ՝ ճնանչըմ ա։ Կուռը փռնըմ ա, հիլ չի անըմ, ասըմ ա. «Հայրի՛կ, հայրի՛կ տըեսար, տո̈ւ քու ծըեռովը քու տունը քանդեցիր, ինձ աքսորեցիր, տո̈ւ էլ էտ օրն ընգյա̈ր»։

Ըստի հերը ճնանչըմ ա, վըեր էս իրան տղեն ա, սիրտը ճաքըմ ա ու մըեռնըմ ա։ Տղեն հորը շատ առոք-փառոք վըերունիլ ա տալի, խորթ մորն էլ տանըմ ա իրան կուշտը որպես իրան փըրկողը։

Էտ թաքավըրը արթեն պռաված ա ըլըմ։ Էս տղին դրդըմ ա թաքավըրական կուրսեր, վըեր ավարտի կյա, երգիրը կառավարի։ Էտ վախտը աղվանական թաքավըրի տղա Գյիլոսն էլ ա կյա̈լի էտ կուրսերը, Անգլյարի մինիստրի տղեն էլ։ Էտ իրեքն էլ կյա̈լիս են ըտի կուրսեր։ Էս Ծվգյինոսն ու Գյիլոսը էնքան իրար նըման են ըլըմ, վըեր էլ ասիլու չի, կարըմ չեն, թե տհանց իրարից ճկեն, պիրըմ են ամնին դո̈շերներուն կյըրըմ են, վըեր շշկիլ չի ընգյնեն։

Օրերի մի օր Գյիլոսը Անգլյարի թաքավըրերի ըխչկա վրա̈ սիրահարվըմ ա։ Ծվգյինոսին ասըմ ա. «Սհե պա̈ն կա, ուզըմ եմ նրա̈ ըխչկանը առնեմ, համա ռիսկ չեմ անըմ քյնա̈մ թաքավըրերի կուշտը»։ Անգլիայի մինիստրի տղեն էլ ա էտ ըխչկա վրա̈ սիրահարված ըլըմ։ Ծվգյինոսը էրկուսին էլ ասըմ ա. «Իրար հետ քյա̈ցեք թաքավըրերի կուշտը, վըերիտ կտա՝ կտա»։ Սհա̈նք ետ են կյա̈լի, Ծվգյինոսը ասըմ ա. «Ի՞նչ ասեց»։

Գյիլոսը ասըմ ա. «Ասեց, վըեր կուրսը կպրծնեք, կըկյա̈ք իրար հետ մենամարտի կկպչեք։ Ով ախտի՝ ախչիկս նրա̈ն կը-

տամ։ Համա վախըմ եմ կրենամ վըեչ ախտեմ»։ Ծվգյինոսը ասըմ ա. «Ես քու տըեղը կքյնա̈մ մենամարտի»։

Ծվգյինոսը մի ամիս առաջ քննութին ա տալի, կյա̈լի տուն, Գյիլոսին ասըմ ա. «Վըեր տո̈ւ էլ տաս, պըծնես, կըկյա̈ս իմ կուշտը, ես կըկյա̈մ տըրա̈ հետ մենամարտեմ»։

Ծվգյինոսը կյա̈լիս ա տուն։ Թաքավըերը պիրըմ ա սըրա̈ն թաքավըեր ա տնըմ, իրան ծըեռովը փսակըմ։ Հլե հըսանիքը պըրծնըմ ա, Գյիլոսը կյա̈լիս ա ըտի։ Կյա̈լիս են, ասըմ՝ քեզ կանչող կա։ Սա̈ տո̈ւս ա կյա̈լի, տըեսնըմ իրան հնգյերն ա։ Հասնըմ ա, փթաթվըմ, պչպչորըմ են, ասըմ ա. «Ի՞նչ կա, խեր ըլի»։

Ասըմ ա. «Մենամարտի օրը նշանակել են, էսինչ օրն ա»։

Ծվգյինոսը հա̈շվըմ ա, տըեսնըմ ա՝ անչախ հասնի։ Ծըեռաց նըրա̈ շորերը հանըմ ա, ինքը հաքնըմ, իրան շորերը նըրա̈ն ա հքցնըմ, ասըմ ա. «Կյքյնա̈ս ու սուս ու փուս թաքուհու հետ կքընես, մըչև իմ կյա̈լը»։

Սհա̈նք իրար հետ պռոշտի են ըլըմ, նա̈ ճամփա ա ընգյնըմ, քյնըմ։ Ըրո̈ւգյո̈ւնը, վըեր թաքուհին տըեղերը պատրաստըմ ա, ասըմ ա. «Քնի՛»։ Սա̈ կյա̈լիս ա, թուրը հանըմ, տնըմ արանքըմը ու քնըմ։ Մի քանի օր վըեր սհե ա անըմ, ախչիկը կյա̈լիս ա, հորը բողոքըմ ա։

Հերը ասըմ ա. «Ախչիկ ջա՛ն, պա̈ն չի կա, բա̈լի տա̈ ուխտ ունի, մի քանի վախտ հա̈մփերի»։ Մի քանի վախտ անց ա կենըմ, տըեսնըմ ա, չէ տղեն մոտ չի կյա̈լի, սա̈ նորից ա հորը բողոքըմ։

Հերը կանչըմ ա, ասըմ ա. «Էս ի՞նչ պա̈ն ա, խի՞ ես տհե անըմ»։ Ասըմ ա. «Ես երթվել եմ, վըեր ամուսնանալուց եդը քառասուն օր իմ կնգյա̈ կողքին քնեմ վըեչ»։

Անց ա կենըմ մի քանի վախտ Ծվգյինոսը կյա̈լիս ա։ Գյիլոսը ասըմ ա. «Ախտեցի՞ր»։ Ասըմ ա. «Հա՛, ախտել եմ, ըխչկանն էլ պիրել եմ, էսինչ քաղաքի գլխավըեր հո̈ւրանոցի, էսինչ համարըմն ա»։

Էս տղեն վըեր ա կենըմ, կյա̈լի իրան կնգյա̈ կուշտը։ Սա̈ էլ էտ ա իրան տունն ա եկել։ Սհա̈նք վըեր շորերնուն հանըմ, քնըմ են, սա̈ էլ թուրը մեչտեղը չի տնըմ։ Կնիկը ասըմ ա. «Հը, ժա̈մա̈նա̈կտ թմամե՞ց, վըեր էլ թուրտ հանըմ չես, տնըմ մըեր մեչտըեղը»։

Նա̈ էլ ընդեղ ա մա̈նըմ, վըեր հնգյերը քնիլիս թուրը տրել ա իրանց ղաթմը։ Երկուսն էլ կլխի են ըլըմ մին-մնի ազնվութինը։ Գյիլոսն էլ ընդեղ ա թաքավըեր տա̈ռնըմ։ Մի տարուց եդը, Գյիլոսին երկու տղա ա ըլըմ։

Օրերի մի օր Ծվգյինոսի կնիկը մի ցիգանի տղի վրա սիրահարվըմ ա ու սլայմանավըրերվըմ ա, վըեր նրա̈ն պիրի թաքավըեր տնի, Ծվգյինոսին էլ կորցնի։ Քյնըմ ա բժշկից մի տեղ ա պիրըմ, քցըմ ճաշի մեչը, մարթին ուտցնըմ։ Սա̈ կամաց-կամաց հիվընդանըմ ա, կուչ կյա̈լի, անպըետկանըմ, էլ կարըմ չի թաքավըրիրութին անի։

Մի քանի օրից եգը կնիկը քյնըմ ա պալատ, մինիստրներին հվաքըմ, ժողով անըմ, ասըմ ա. «Նա̈ էլ երգյիր կառավարելու ուժ չի ունի, մի թաքավեր ճկեցեք, թող երգյիրը կառավարի»։ Նհա̈նք էլ ասըմ են. «Տո̈ւ ում կառաչարկես, մըենք էլ նրա̈ն համաձայն ենք»։

Սա քյնըմ ա, ցիգանի տղին պիրըմ, Ծվգյինոսի շորերը հքցընըմ, թաքավըեր տնըմ։ Ծվգյինոսին էլ տնըմ են սելմը, տանըմ քաղաքից հեռու ըրախըմ, վըեր օքմու վալըաքի վըեչ։

Ծվգյինոսը որոշըմ ա մի կերպ իրան հսցնի Գյիլոսի կուշտը, քանի շունչը վըեն ա։ Սա̈ տհե մի կերպ չըշարվըլիլով կամաց-կամաց մի օր վըետով, մի օր մնին խնթրիլով սելով. ըստո̈ւր ընդո̈ւր բութա ըլիլով հասնըմ ա Աղվանըստան։ Օքմու խնթրըմ ա, ասըմ ա. «Թաքավըերին ասեցեք վըեր Ծվգյինոսը էկել ա, ուզըմ ա քեզ տըենա»։ Մինն էլ սրա̈ն պա̈նի տըեղ չի տնըմ, ասըմ են. «Սրա̈ն մտիկ, սա էր պակաս, սա̈ փ՞նչ ա, վըեր թաքավըերին կանչըմ ա»։

Էտ խեղխճը մի քանի սուտկա ըտիեք քաշ ա կյա̈լի սոված, ծարավ։ Մի օր էլ վա̈ղիրին ա պտահըմ։ Շատ ա խնթրըմ, մանդրամասը պատմըմ ա, ասըմ ա. «Շատ խնթրըմ եմ, թաքավըերին ասա՝ Ծվգյինոսը կանչըմ ա»։ Էս վա̈զիրը կյա̈լիս ա պալատ, թաքավըերին ասըմ ա. «Մի սհե՛, սհե՛ մարթ խնթրեց քեզ ասեմ՝ Ծվգյինոսը կանչըմ ա»։

Թաքավըերն ու թաքուհին մա̈նըմ են թչէ, իրար հետ տո̈ւս են թռչըմ։ Պալատականնին մընըմ են ըրմացած, թե՝ էս ով եկավ, էս ի՞նչ պա̈ն էր, վըեր էրկուսն էլ իրար հետ տո̈ւս տա̈ռա̈ն։ Տհա̈նք տո̈ւս են կյա̈լի տո̈ւռը թչէ, ծըեռաց ճնանչըմ են, իրար ճտո̈վ են ընգյնըմ պչպչըըմ։ Սրա̈ն պիրըմ են պալատ, իրանց կռավաթին պառկըցնըմ։ Սա̈ մանդրամասը, կլխին եկածը պատմըմ ա, թե՝ կնիկը ինչ ա արել, վըենց ա իրան դավաճանել ու տարել քցել անտառնին։

Ծըեռաց բժիշկ են կանչըմ, վըեր սրա̈ն բուժեն։ Բժիշկնին կյա̈լիս են, մտիկ անըմ, ասըմ են, վըեր սա̈ բուժվիլ չի։ Թաքավըերն ու թաքուհին սրա̈ կողկից հեռանըմ չեն։ Մի օր էլ տըե-

նըմ են սա̈ քնտեղից վըերկացել ու լա̈ց ա ըլըմ։ Ասըմ են. «Խի՞ ես լա̈ց ըլըմ»։ Ասըմ ա. «Մի անսպասելի երազ տըեհա, բայց անկարնլի պա̈ն ա, պատմիլու էլ չի»։ Շատ են խնթրըմ, վըեր ըշխարքմը անկարելի պա̈ն չիկա. «Պատմի տըենանք, բա̈լի քեզ առողջացնըմ ենք»։

Շատ վըեր խնթրըմ են, ասըմ ա.— Մի պառավ, սպիտակ մա̈ւրքավըեր մարթ ինձ ասաց. «Թե թաքավըերը քեզ շատ սիրըմ ա, թող էտ ճուխտ ըեխանց ջաներնուցը արինը քաշի տաք ճա̈ւրը ու նրա̈նով քեզ լղցնի, տու կառողճանաս»։ Էտ վըեր ասըմ ա, թաքավըերը ռոպեական բժիշկ ա կանչըմ, ասըմ ա. «Էս երկու ըեխանց արինը մաքուր քաշի»։ Բժիշկը ասըմ ա. «Թաքավըերը ապրած կենա, ախր ապրիլ չեն, կմեռնեն»։ Ասըմ ա. «Քեզ ասըմ եմ, քա՛շի»։

Սա̈ էրկու ըեխի արինն էլ քաշիլ ա տալի, տաք ճրի հետ խառնըմ ու տրա̈ն լղցնիլ ա տալի։ Ըեխանցն էլ ծածկըմ են, մթա̈մ թե մըեռած են, եղով վըեկումեն։

Օր օրի վրա̈ Ծվգյինոսը լա̈վա̈նըմ ա, մհել կյալիս են տենըմ ըեխեքը քնած։ Էտա ուրախութենիցը պիրըմ են, մեծ քյեփ սարքըմ, կեր ու խում անըմ։ Մի քանի վախտիցը եդը Գյիլոսը տենըմ ա, վըեր Ծվգյինոսը տա̈ռել ա առաչվա ուժով, ջանով մարթը։ Ծըեռաց հրաման ա տալի, զորք ա հվաքըմ, վըեր նհա̈նց վրա̈ կռիվ քյնա̈։ Թաքուհին ասըմ ա. «Մի ծի էլ ինձ տու, ես ել եմ կյա̈լի, վըեր ես էլ իմ ծըեռովը նրա̈ դատը անեմ»։

Պիրըմ ա Ծվգյինոսին թաքավերական շորեր ա հքցնըմ, թաքավըերի թագ ա տնըմ կլխին, ու էրկուսով զորքը քաշըմ են կյա̈լի ցիգանի թաքավըերի վրա̈։ Կռիվը սկսըմ են, հենց ճա̈րթ ու փշուր անըմ, հենց կտորըմ են, վըեր էլ ասիլու չի։ Էրկու օրվա միչին տհա̈նք ճա̈րթըմ, փշրըմ են ու մտնըմ են պալատը։

Գյիլոսի կնիկը ասըմ ա. «Էն թաքուհու իրավունքը ինձ տվեք»։ Թաքուհուն տալիս են Գյիլոսի կնգյա̈նը։ Սա̈ տրա̈ն կապըմ ա ծառիցը ու ամեն ժամը թմամելիս մի կյիլո մըիս ա արա̈նից կտրըմ։ Տհե մի քանի ժամ տա̈ ծվըմ, ճչըմ ա ու մըեռնըմ ա։ Սհա̈նք կանչըմ են մինիստրներին, Ծվգյինոսին շհանց տալի, ասըմ են. «Սրա̈ն ճնանչըմ ե՞ք»։ Ասըմ են. «Հա՛»։ Ասըմ են. «Սա̈ վա՞տ էր ծըեզ մըհար»։ Ասըմ են. «Չէ՛»։

— Բա խի՞ գահիցը հեռցրիք։

Ասըմ են. «Մենք պա̈նից խա̈բա̈ր չենք, թաքուհին արավ. ի՛նչ արավ չիմացանք, ասեց՝ հիվանդ ա, էլ կարըմ չի կառավարի»։

*Ասըմ են. «Հմի ո՞ւզըմ եք, վըեր սա՜ ըլի ծըեր թաքավըերըը»։ Ասըմ են. «Հա՛»։*

*Պիրըմ են մի մինիստրի ըխչկա հետ փսակըմ են, թաքավըեր տնըմ։ Ցիգանի տղին էլ կապըմ ֆայտոնի քմակիցը, չորս ծի լծըմ ու քշըմ։ Էնքան քշըմ են, վըեր էլ նրա՜նըմ հալ չի մնըմ։*

*Օխտը օր, օխտը քշեր ըտի քյեփ են անըմ, ուտըմ, խմըմ ու քրախըմ կյա՜լի։*

